ՀՀ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ» ՊՈԱԿ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Նալբանդյան 28
Հեռ. (374 10) 59 00 10
Էլ.փոստ transpoak@mail.ru

N 73

«15» 12 2014թ

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1>> ***ծածկագրով***
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին
aprang-11-1@shh.gnumner.am

Հարգելի մասնակից՝

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1>> ծածկագրով ընթացակարգի շրջանակներում <<Տրանսպորտային փոխադրումներ>> ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ապրանքը:

Գնումն իրականացվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն: Սույն գնման գործընթացի շրջանակներում կնքվող պայմանագիրը լուծարվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել:

Սույն հրավերի /ծանուցման/ ծածկագիր է հանդիսանում <<ՏՓ-ՇՀԱՊՁԲ-15/01 >>:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել Նալբանդյան 28, 205 սենյակ հասցեով, մինչև 2014թ. դեկտեմբերի 24-ը ժամը 12:00-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Մ. Թորոսյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն <<Տրանսպորտային փոխադրումներ>> ՊՈԱԿ-ում, Նալբանդյան 28 հասցեով, N 205 սենյակում, 2014թ.-ի դեկտեմբերի 24-ին, ժամը 12:00-ին:

Գնման առարկա է հանդիսանում << Տրանսպորտային փոխադրումներ >> ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ բենզինի ձեքբերումը:

<<Տրանսպորտային փոխադրումներ>> ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ մատակարարման տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի /ծանուցման/ N 3 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա/ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում /Հավելված 1/, ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ/ գնային առաջարկ /Հավելված 2/: Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է արժեք /որը ներառում է ինքնարժեք և շահույթ/ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներով բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել <<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1>> ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

<< Տրանսպորտային փոխադրումներ >> ՊՈԱԿ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ transpoak@mail.ru

Հարգանքով՝ << Տրանսպորտային փոխադրումներ >>

ՊՈԱԿ-ի տնօրեն ***Ա. Դանիելյան***

Մ. Թորոսյան
Հեռ. 010-52-93-10
transpoak@mail.ru

Հավելված 3
<<ԳԱԿ- ՇՀԱՊՁԲ-11/1>> ծածկագրով
ընթացակարգի հրավերի

ՎԱՌԵԼԻՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾ
N ՏՓ-ՇՀԱՊՁԲ-15/01

ք. Երևան << >> << >> 2014թ.

<<Տրանսպորտային փոխադրումներ>> ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Ա. Դանիելյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և ----------ն, ի դեմս Ընկերության տնօրեն ----------ի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան և գործողության ժամկետը

Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված բենզինը /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում վճարել դրա համար:

2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը.

բ)հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.4.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը,

3.1.5 Ընդունել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.3.5 Սույն Պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն Պայմանագիրը կնքելուց հրաժարված մասնակիցը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4 Հետ տանել Գնորդի կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.5 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.6 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.7 Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.8 Պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է՝ _____ (_____) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Յուրաքանչյուր ապրանքատեսակի միավորի գինը սահմանված է սույն Պայմանագրի N2 հավելվածում: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Կանխավճարի մարումն իրականացվում է Պայմանագրով նախատեսված արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է Պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.1.1 ***Պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման դիմաց վճարումները կիրականացվեն այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետը, որի մասին կողմերի միջև կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:***

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ կողմերի միջև կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2015թ. դեկտեմբերի 30-ը:

5. Ապրանքի որակը

Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետև՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված 3):

6.2 Արձանագրություն ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) Հարցի կանոնավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձում է տույժ 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ Պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Պայմանագրի 1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.4 Պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Սույն Պայմանագրով և սույն Պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագիրը լուծարվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել:

9.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Սույն Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Պայմանագրիանբաժանելի մասը:

Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան հայաստանի հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հակտացումների նվազեցումը:

2) Պայմանագրով նախատեսված Ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները սորոշվում են և դրանց փոփոխությունը գնահատվում է նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարածգվել մինչև այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել առարկային օգտագործման պահանջը:

9.5 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է պատվիրատուի հետ Պայմանագիր կնքած անձը::

9.6 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում::

9.7 Պայմանագիրը և հավելվածները կազմված են ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի N 1, N 2 և N 3 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ :

9.8 Սույն Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմերի գրավոր համաձայնության:

9.9 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
<<----------->>	<<----------->>
ք. Երևան,----------	***ք. Երևան,----------***
<<----------***բանկ***>>	<<----------***բանկ***>>
Հ/Հ՝ ----------	Հ/Հ՝ ----------
ՀՎՀՀ՝----------	ՀՎՀՀ՝----------
----------	----------
(ստորագրություն)	*(ստորագրություն)*
Կ.Տ.	***Կ.Տ.***

Հավելված N 1
<<_____ >>_____2014թ.կնքված
<<ՏՓ-ՇՀԱՊՁԲ-15/01 >> ծածկագրով
գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/Հ	Ապրանքի*			
	անվանումը	չափի միավորը	քանակը	համառոտ նկարագիրը
1.	բենզին՝ ռեգուլյար	լիտր	2600	Արտաքին տեսքը՝ մաքուր և պարզ, օկտանային թիվը որոշված հետազոտական մեթոդով՝ ոչ պակաս 91, շարժիչային մեթոդով՝ ոչ պակաս 81, բենզինի հագեցած գոլորշիների ճնշումը՝ 45-ից մինչև 100 կՊա, կապարի պարունակությունը 5 մգ/դմ3-ից ոչ ավելի, բենզոլի ծավալային մասը 1 %-ից ոչ ավելի, խտությունը՝ 15 0 C ջերմաստիճանում՝ 720-ից մինչև 775 կգ/մ3, ծծմբի պարունակությունը՝ 10 մգ/կգ-ից ոչ ավելի, թթվածնի զանգվածային մասը՝ 2,7 %-ից ոչ ավելի, օքսիդիչների ծավալային մասը, ոչ ավելի՝ մեթանոլ-3 %, էթանոլ-5 %, իզոպրոպիլ սպիրտ-10%, իզոբուտիլ սպիրտ-10 %, եռաբութիլ սպիրտ-7 %, եթերներ (C5 և ավելի)-15 %, այլ օքսիդիչներ-10 %, անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2004թ. նոյեմբերի 11-ի N 1592-Ն որոշմամբ հաստատված «Ներքին այրման շարժիչային վառելիքների տեխնիկական կանոնակարգի»:

*Ապրանքի մատակարարումներն իրականացվում եմ կտրոնային եղանակով:

ԳՆՈՐԴ

<<---------->>
ք. Երևան,----------
<<----------**բանկ**>>
Հ/Հ՝ ----------
ՀՎՀՀ՝----------

(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

<<---------->>
ք. Երևան,----------
<<----------**բանկ**>>
Հ/Հ՝ ----------
ՀՎՀՀ՝----------

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
<<_____ >>_____2014թ.կնքված
<<ՏՓ-ՇՀԱՊՁԲ-15/01 >> ծածկագրով
գնման պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հազ. ՀՀ դրամ

Հ/Հ	Ապրանքի			Նախատեսվում է գնել 2015 թ.								Ընդամենը	
	Անվանումը	Չափ. միավ.	Միավորի գինը /ՀՀ դրամ/	I եռամսյակ		II եռամսյակ		III եռամսյակ		IV եռամսյակ			
				քան.	գինը	քան.	գինը	քան.	գինը	քան.	գինը	քան.	գինը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1.	բենզին ռեգուլյար	լիտր		650		650		650		650		2600	

ԳՆՈՐԴ

<<---------->>
ք. Երևան,----------
<<----------բանկ>>
Հ/Հ՝ ----------
ՀՎՀՀ՝----------

(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

<<---------->>
ք. Երևան,----------
<<----------բանկ>>
Հ/Հ՝ ----------
ՀՎՀՀ՝----------

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
<<_____ >>_____2014թ.կնքված
<<ՏՓ-ՇՀԱՊՁԲ-15/01 >> ծածկագրով
գնման պայմանագրի

Վաճառող	***Գնորդ***
<---------->	<---------->
----------	----------
<----------բանկ>	<----------բանկ>
Հ/Հ՝ ----------	Հ/Հ՝----------
ՀՎՀՀ՝ -------	ՀՎՀՀ՝ ----------

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N_____
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<_____>> <<_____>> 201 թ.

Պայմանագրի անվանումը՝ *վառելիքի մատակարարում:*
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<____>> _____ *201 թ.*
Պայմանագրի համարը՝ *N* ***<<ՏՓ-ՇՀԱՇՁԲ-15/01 >>***

Պատվիրատուն՝ ի դեմս <<Տրանսպորտային փոխադրումներ >> ՊՈԱԿ-ի սպասարկման տնօրեն՝ Ա. Դանիելյանը և Կատարողը՝ ի դեմս <--------- >> -------ի, տնօրեն ----------նը հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները (այսուհետև՝ մատակարարումներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը <<_____>> <<_____>> 201 թ-ից <<____>> <<____ >> 201 թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ մատակարարումներ.

Գնման առարկայի անվանումը	***Գնման առարկայի քանակական ցուցանիշը***	***Աշխատանքների կատարման ժամկետը***	***Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)***	***Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)***
բենզին ռեգուլյար				
Ընդամենը	----------	----------		---------

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
_____	_____
Ազգանուն, Անուն	Ազգանուն, Անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
<<ԳԱԿ- ՇՀԱՊՁԲ-11/1>> ծածկագրով
ընթացակարգի հրավերի
<<ՏՓ-ՇՀԱՊՁԲ-15/01 >> ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԴԻՄՈՒՄ

_____հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

<<Պատվիրատուի անվանումը>>-ի կողմից N *<<ՏՓ-ՇՀԱՊՁԲ-15/01 >>* ծածկագրով հայտարարված ընթացակարգի ..... չափաբաժնին (չափաբաժիններին) և
չափաբաժնի (չափաբաժինների) համարը

հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

_____-ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի կողմից
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,

2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

_____-ն հավաստում է, որ չունի գերիշխող դիրքի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

_____ -ի էլեկտրոնայանին փոստի հասցեն է՝ <<Մասնակցի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

էլեկտրոնային փոստի հասցե>>:

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____20 թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 2
<<ԳԱԿ- ՇՀԱՊՁԲ-11/1>> ծածկագրով
ընթացակարգի հրավերի
<<ՏՓ-ՇՀԱՊՁԲ-15/01 >> ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

Գնի առաջարկ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված N <<ՏՓ-ՇՀԱՊՁԲ-15/01>> ծածկագրով ընթացակարգի հրավերը/ծանուցումը/, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը,

_____-ն առաջարկում է պայմանագիրը կատարել

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

համաձայն հետևյալ գների.

/ՀՀ դրամ/

Չափա-բաժինների համարները	Ապրանքի անվանումը	Արժեք*	ԱԱՀ**	Պայմանագրի կատարման համար առաջարկված գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5=3+4
1	Բենզին ռեգուլյար /2600 լիտր/			

***3-րդ սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:**
****Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:**

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____20 թ.
(ամսաթիվը, ամիսը)